

Վոթացի զօրաւոր գունդ մը՝ որ պահեստի համար էին, զուրս յարձրկեցան ու վայրենի կատաղութեամբ մերձակայ բլուրներուն վրայէն Հոնաց վրայ թափեցան ու բոլոր բանակը շփոթեցին։ Մտտիղաս յուսահատաբար ջանաց զօրքը միաբանելու։ Բայց իրեն կործանումը յայտնի էր՝ եթէ միայն գիշերը վրայ չհասնէր։ Ի կատաղութեամբ նոյն գիշերուան մէջ այն ահեղ կոտորածէն ապրած ու ցրուած զօրքերը բոլոր մէկտեղ ամփոփեց և բանակին աղիւին և սայլերուն ետևը զիրենք զետեղեց, ու իբրև ամրոցներու մէջէն թշնամւոյն կը սպասէր։ Մհազին էր բարբարոսաց պատրաստութիւնը, և ինքն Մտտիղաս իբրև առիւծ յանձաւի սոսկումն էր տեսողաց, ինչպէս կ'ըսեն պատմագիրք։ Եւ իբրև Մտտիղաս Մտտիղասայ այս պատրաստութենէն վախցաւ, և կամ իրեն քաղաքագիտութե պակասութիւնն էր պատճառ որ նորէն Մտտիղասայ վրայ չյարձրկեցաւ, այլ միայն Փրանկը և Վոթացիք իրենց առջևը մնացած Հոնքերը ջարդեցին, և քիչ ետքը Մտտիղասի յաղթական բանակը ցրուեցաւ։ Բայց Մտտիղաս քանի մը օր դեռ անանկ ամրացած կեցաւ, վերջը ի կարօտութենէ ստիպեալ դէպ ի հռնոս քաշուեցաւ։ Ի՞նչպէս Մտտիղաս եղաւ և իրեն Փրանկ զօրքերը, որոնք ընդունայն սեպեցին Մտտիղասի ըրած խոհեմութիւնը, ու Հոնաց ետևէն ինկան զիրենք հալածելու, և տարին ինչուան Վերմանիոյ սահմանները քշեցին։

Եւ իբրև չէ եղած ուրիշ պատերազմ մը յորում այս աստիճան արիւնհեղութի եղած ըլլայ։ Բայց այս ալ յայտնի է որ աս պատերազմիս պէս անօգուտ և բարի հետևանք մը չունեցող պատերազմ եղած չէ։ Մտտիղաս նոր հրաւերք մըն ալ ըրաւ հիւսիսային բարբարոսներուն, և Վոթաց ու Փրանկաց սպաննածներուն տեղը լեցուց։ Եւ դեռ տարի մը չէր անցած Շալոնի պատերազմին վրայ որ Ստալիա՝ յաւեր և ոտնակոխ՝ Մտտիղասայ անուներ լսելով կը սարսափէր. և հռովմ ինքզինքը պաշտպանե-

լու համար իրեն քաղաքացիներուն վրայէն յոյսը կտրած Լեոն Ա քահանայապետին աղօթիցը ինքզինքը կը յանձնէր։ Վահանայապետը նուաճեց զՄտտիղաս ինչպէս որ Մտտիղաս յաղթեց էր։

Ամերիկայի ձիաքահանայի մը հրդեհիլը։

Մերիկայի Սիագեալ Վահանգաց Սիւ Լաօք Հերալտ լրագիրը այսպիսի տխուր դէպք մը կը պատմէ իր վերջի թուերէն մէկուն մէջ։

Բենսիլվանիոյ նահանգին Վիտին քաղաքին մէջ երբ գործաւորները կարածութի փոս մը խորունկցնելու կ'աշխատէին, յանկարծակի ահագին ճայթմամբ մը ձիւթը սկսաւ հալած գուրս վազել, 70 Դոնէլլա քանակի յորդութեամբ, և այն լուծեալ հեղեղը 41 ոտք հողէն վեր բարձրացաւ։ Զիւթէն շուտ մը կազ ձևացաւ 50 կամ 60 ոտք թանձր ամպի պէս։ Ի՞նչպէս ի մէկ մօտիկները եղած ճրագները բոլոր մարեցին՝ բաց ի մէկ հատէ մը որ 400 Դոնէլլա հեռուն վառուած էր։ Բայց այն չափ հեռաւորութէ ալ կազը բռնկեցաւ, և բոլոր քովի մթնոլորտը կրակ կտրեցաւ։ Հազիւ թէ կազը բռնկեցէր՝ ձիւթն ալ մէկէն բռնկեցաւ, և ջրի պէս աղբերաբար կը հոսէր 100 ոտք լայնութեամբ՝ բիւրաւոր կրակէ հեղեղներով շատ չանցաւ գետինն ալ բռնկեցաւ՝ որով հրդեհը ձիւթէն ճարակ գտնելով սաստկացաւ, ու անհնարին երագութի հետզհետէ տարածուեցաւ։ Ինկարելի է պատմել թէ ինչ սարսափելի տեսարան էր այն ժաման։ Վործաւորներէն ոմանց ութը տասը մէկէն 20 ոտք հեռու նետուեցան։ Ոմանք ալ կիսամեռ և կիսայրեաց այն գոփային կրակին մէջէն օգնութիւն կը կանչէին։ չորս մըն ալ այն կրակէ կարածութիւն մէջ կը լողային, և անոնցմէ մէկը որ փոսին ա-

մենէն խորունկ տեղը կ'աշխատէր մէկէն 'ի մէկ խանձոտեցաւ :

Ուստի անունով մէկ մըն ալ, որ փոսերուն մէկ մասը իրեն ստացուածքն էր, ուսկից ամէն օր 1000 ֆուլլաբի շահունէր, ձիւթին ճայթմանը ժամանակ փոսին բերնին մօտիկ գտնուելովը 20 ոտք հեռուն նետուեցաւ . բայց կրցաւ շուտ մը ոտքի վրայ ելլել ու 10-12 ոտք դեռ հեռուն վազել . այն միջոցին քանի մը գործաւորներ զինքը առին ու մօտիկ հիւղ մը տարին : Ամբողջ զգեստները այրեր էին, ինչպէս նաև կօշիկները, մազերը, ըղունգները, աչքերը, արտւանուները, և աչքին կոպերն ալ բոլորովին աւրուած էին : Այսպիսի խեղճ վիճակի մէջ դեռ 9 ժամ ալ ապրեցաւ . նոտար մը կանչեց ու կտակը շինեց . 50,000 ֆուլլաբ աղքատաց թողուց և 200 ֆուլլաբ ալ գործաւորներէն մէկուն . բայց դեռ անունը չստորագրած մեռաւ :

Ուրիշ 6 հոգի ալ մեռան . 5 հոգւոյ մըն ալ ոսկերոտիքը դեռ կրակի մէջ են . շատերն ալ, որոնց մէջ քանի մը օտարականներ ալ կային որ եկեր էին աշխատութիւնը տեսնելու՝ բոլորովին կորսուեցան : Այնթաղութեամբ կ'ըսուի որ շատ մարդ ալ փոսուն մէջ մոխիր դարձած պիտի ըլլան : Երոնցմէ բոլորէն դուրս 30 հոգի ծանր վիրաւորեալք կը համրուին, և շատ մը ուրիշ ալ թեթև վիրաւորեալներ :

Հրդեհին ժամանակ 900-1000 ոտք հեռու տեղեր ալ կրակով բռնկեցան, և հիւղեր՝ մեքենաներ ու դեռ շատ ուրիշ բաներ այրեցան : 1200 ոտք հեռուն շոգիի կաթսայ մը ճաթեցաւ ահագին դղրդմամբ և նոյն վայրկենին մէկէն գործաւորը մեռցուց :

Ինչոր երկինքը կրակ կտրած էր : Ապրաձիւթին հեղեղը որ 40 ոտք բարձրացեր էր՝ կրակէ շողշողուն սեան մը պէս կ'երևար, որուն վրայ բորբոքած կազը հրացայտ բոյեր կ'արձրկէր դէպ 'ի երկինք, և կարծես թէ կրակէ լեզուով ամպերը կը լափէր : Իսկ հրդեհին ժամանակ եղած գոռում գոչումը

սարսափելի փոթորկի մը, կամ անտանհերու մէջ յանկարծական սաստիկ մրրիկներու պատճառած շփոթութենու աղաղակին հետ հազիւ կը համեմատուի : Իսկ Զերմութիւնը անանկ սաստիկ էր՝ որ անկարելի էր 150 քայլէն աւելի հրդեհին մօտիկնալ՝ առանց մորթ ու զգեստ այրելու : Աշխարհքիս մէջ եղած հրարուեստական տեսարաններուն մէջ ասիկայ ամենէն ահաւորն և միանգամայն հրաշալի էր, որ բնաւ մարդ մը ինչուան հիմա չէր տեսած :

Արհրորդ օրը ուրբաթ առաւօտը դեռ ձիւթային հեղեղը կը վազէր, և վեր 'ի վերոյ հաշուով մը կրնանք ըսել որ նոյն ատեն 100 Դժէշաբէն աւելի կը վառէր :

Հանքը վրանին առնողներուն ըրած կորուստը օրուան մէջ 20-25,000 ֆուլլաբ կը սեպուի :

Որ և իցէ մարդկային ուժկարող չէ այս հրդեհը մարելու . և ձիւթը պիտի վառի՝ ինչուան որ աղբիւրը լմնայ : Իարձեալ անկարելի է այն ահաւոր գեղեցկութիւնը ճիշդ նկարագրել, և պատճառած անթիւ խեղճութեանցը ճիշդ գաղափար մը տալ :

Մահ ձկնորսին (Տես երես 110)

Արրիկոցցոյի հօրը՝ Սիբայելին հիւղը քաղքէն դուրս դէպ 'ի հիւսիսային կողմը կ'իյնար . լճէն տեսնուածը միայն յարդէ պզտի տանիք մըն էր՝ փայտէ խաչ մը վրան տնկած . բոլոր մէկալ մասը ծածկուած էր երկու ծեր շագանակի ծառերէ, որոնք կարծես թէ ծռած կը գրկէին զհիւղը : Իերսը խցիկ մըն էր, յատակը աղիւսի տեղ վանդակաձև տախտակամած, պատերն ալ ծխէն սևացած :

Ինկիւնը անկողին մը կար հապարակ ու խոշոր ծածկութեով գոցուած, որ խեղճ Արրիկոցցոյին էր . իսկ այն միջոցին իրեն հաւատարիմ քանգրահեր շունը պառկեր էր վրան :

Ինկոջնոյն դէպ 'ի ոտքին կողմը եր-